

**ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՔՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒՈՒՄ**

Թուրքիայում շարունակվում է այն իրավիճակը, որի պայմաններում մտացածին կերպով խեղաթյուրվում են քուրդ ժողովրդի թվական տվյալները, մերժվում է քրդերի՝ որպես ինքնուրույն ժողովրդի գոյությունը, այդ հիման վրա զանց է առնվում քրդական ազգային հարցի գոյության փաստը: Այն առավելապես կապված է հետևյալ երկու պատճառների հետ. ա) ազգային ինքնավարության համար իրաքյան Քրդստանում տեղի ունեցող պայքարի հետ, որը միջազգային ճանաչում է գտել և դրա կողքով, ըստ էության, լուծվածք անցնել հնարավոր չէր, բ) Թուրքական Քրդդստանում ազգային ինքնագիտակցության որոշակի աճի, քրդերի տնտեսական ու մշակութային զարգացման հարցերի սրման հետ: Եվ ահա քրդերի՝ որպես ինքնուրույն ազգության գոյությունը մերժող Թուրքական մամուլը ստիպված է անդրադառնալ այդ հարցին:

Թուրքական մամուլը քրդերի և քրդական հարցի մասին հաճախ հրապարակում է նյութեր, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու երկրի կառավարող շրջանների, և հատկապես Թուրքական ազգայնական մտավորականության դիրքորոշման մասին՝ քրդերի պատմական ճակատագրի, մասնավորապես քրդական պրոբլեմի նկատմամբ:

* * *

Թուրքական պաշտոնական վիճակագրությունը ուղղակի տվյալներ չի տալիս բնակչության ազգային կազմի մասին:

Ըստ լեզվախմբերի վերաբերյալ տվյալների, 1965 թ. մարդա-

Համարի ժամանակ 2327778 մարդ որպես մայրենի լեզու ճանաչել է քրդերենը¹։

Փաստեր կան այն մասին, որ զգալի թվով քրդեր մարդահամարից դուրս են մնում։ Քուրք առաջադեմ սոցիոլոգ Իմայիլ Բեշիկչին, խոսելով քուրդ քոչվոր աշիրաթների մասին, հայտնում է, որ նրանք նորածիններին երբեք արձանագրել չեն տալիս և բնականաբար մնում են նաև որպես դինժառայությունից խուսափողներ⁽²⁾։ Բացի այդ, նույն Բեշիկչիի վկայությամբ, մարդահամարին ղուգադիպող օրերին, քրդերից շատերը գտնվում են քաղաքներից, գյուղերից շատ հեռու՝ սարերում, յայլաներում, դրա հետևանքով նրանք դուրս են մնում մարդահամարից⁽³⁾։

Քուրքական հանրագիտարանում, «Քրդեր» խորագրով հոդվածում պնդում կա այն մասին, որ իբր քրդալեզու բնակչությունը տարեցտարի նվազում է։ Հոդվածում ներկայացված է աղյուսակ, որտեղ տրված են 1927, 1935, 1945, 1955 թ. մարդահամարների տվյալները քրդալեզու բնակչության թվի ու տոկոսների մասին⁽⁴⁾։

Մարդահամարի թվականը	քրդալեզու բնակչությունը	քրդալեզու բնակչության տոկոսները
1927	1184446	8,7
1935	1480246	9,1
1945	1476562	7,8
1955	1375739	5,7

Ներկայացված թվական փաստերը, սակայն, հիմք չեն տալիս կատարել նման հետևություն։ Ինչպես երևում է աղյուսակից, քրդալեզու բնակչությունը, որի թիվը 1927-ին հասնում էր 1184446-ի 1935-ին բարձրանում է 1480246-ի, 1945-ին այն թեև իջնում է 1476562-ի, այնուամենայնիվ չի կարելի նման հետևություն անել, այն էլ այդպիսի փոքր նվազումով (3684 մարդ)։ Իսկ ինչ վերաբերում է 1955 թ. տվյալներին (1375739), որի համաձայն

¹ Şevket Süreyya Aydemir, Doğu illeri ve Kürt vatandaşlarımız, „Ak-ış“, 6. XI. 1967, s. III.

² İsmail Beşikci, Doğu Anadolu'da göçebe kürtler, „Forum“, I. V. 1967 (հոդվածաշարք, որը մեր ենթադրությամբ ավելի լրիվ կերպով կարելի է զբոսնել հեղինակի հետևյալ գործում. İsmail Beşikci, Doğuda değişim ve yapısal sorunlar, Göçebe Alıkan aşireti, Ankara, 1969.

³ Նույն տեղում, էջ 16։

⁴ „Türkiye Ansiklopedisi“, c. III., Ankara, 1956, s. 513.

քրդալեզու բնակչությունը նորից է նվազում, դա արդեն ճիշտ չէ: Մի շարք հրատարակություններում, այդ թվում նաև նույն հանրագիտարանի Թուրքիայի ընդհանուր ազգաբնակչության մասին հոդվածում այն ցույց է տրվում 1504482⁽⁵⁾, իսկ պաշտոնական վիճակագրական տարեգրքում⁽⁶⁾ արդեն 1680000 է: Հետևաբար նորից աճել է քրդալեզու բնակչությունը:

Ուղղելով այդ սխալը և ավելացնելով 1965 թ. մարդահամարի տվյալները, կստանանք հետևյալ պատկերը (կլորացված թվերով⁽⁷⁾):

մարդահամարի թվականը	Թուրքիայի բնակչությունը (հազար մարդ)	քրդալեզու բնակչությունը (հազար մարդ)	քրդալեզու բնակչության % - ներքև
1927	13648	1184	8,7
1925	16158	1480	9,1
1945	18790	1477	7,8
1955	24065	1680	7,0
1965	31291	2328	7,4

Աղյուսակից երևում է, որ քրդալեզու բնակչությունը, հակառակ 1945 թ. փոքր-ինչ նվազման (որի պատճառներից մեկը, անշուշտ, 30-ական թվականների վերջերին տեղի ունեցած աքսորը և կոտորածներն էին) այնուամենայնիվ, և հակառակ հոդվածում առաջ քաշված պնդումին աճել է:

Նթե խոսքը վերաբերել հարաբերական իմաստով նվազման, այսինքն այն բանին, որ քրդալեզու բնակչությունը հետզհետե ամբողջ բնակչության ավելի փոքր մասն է կազմում, ապա կարելի է ասել, որ տոկոսային հարաբերությունները վկայում են այդպիսի միայն թեթև տենդենցի գոյությունը: Արդարև, 1927 թ. համեմատությամբ 1965 թ., եթե Թուրքիայի բնակչությունը ամբողջությամբ վերցրած աճել է 120 տոկոսով, ապա այդ աճը քուրդ բնակչության համար եղել է 97:

Կարելի է կարծել, որ քուրդ բնակչությունը սոցիալ-տնտեսական վատթար պայմանների հետևանքով չի աճում այնպիսի տոկոսներով, ինչպես Թուրքիայի բնակչությունը ամբողջությամբ վերցրած: Բայց փաստերը հակառակն են վկայում: Արդարև, 1945—

⁵ „Türkiye Ansiklopedisi“, C. IV., Ankara, 1957, 5. 320; Şevket Süreyya Aydemir, նշված հոդվածը „Akis“, 6. XI. 1967, s. 14.

⁶ „İstatistik Yıllığı“, 1960—62, 5. 78.

⁷ Աղյուսակի Թուրքիայի բնակչության վերաբերյալ տվյալները վերցված են հետևյալ աղբյուրներից. İstatistik Yıllığı, 1960—62, s. 54; Экономика развивающихся стран Азии в цифрах, 1960—1965 гг., М., 1970, стр. 420.

1965 թ., քսան տարվա ընթացքում արևելյան և հարավ-արևելյան 18 վիլայեթների, այսինքն՝ առավելապես քրդաբնակ շրջանների բնակչությունը, հակառակ սոցիալ-տնտեսական ծանր պայմանների աճել է 76 տոկոսով. այդ նույն ժամանակաշրջանում Թուրքիայի բնակչությունը ամբողջությամբ վերցրած աճել է 61 տոկոսով⁸:

Քրդալեզու բնակչության հարաբերական նվազումը կարելի է բացատրել նրանով, որ հայերի բնաջնջումից հետո, կառավարությունը կիրառեց նույն ազգահալած քաղաքականությունը Արևելյան Անատոլիայում արդեն մեծամասնություն կազմող քրդերի նկատմամբ, որի հետևանքով էլ համեմատաբար ավելի մեծ թվով քրդեր, հատկապես թուրքաբնակ վայրերում, կորցնում են իրենց մայրենի լեզուն: Բացի այդ, թուրքաբնակ վայրերում բնակվող քրդերը ազգային ճնշման հետևանքով հաճախ նախընտրում են չղրսևորել իրենց ազգային պատկանելությունը: Նրկու դեպքում էլ նրանք դասվում են թուրքալեզուների շարքը, որի հետևանքով վիճակագրական աղյուսակներում առաջանում է քրդալեզուների հարաբերական նվազումը:

Քրդերի մեծամասնությունը բնակվում է արևելյան, հատկապես հարավ-արևելյան վիլայեթներում: 1960 թ. տվյալների համաձայն քրդերենը որպես մայրենի լեզու օգտագործվում է առավելապես հետևյալ վիլայեթներում⁹:

վիլայեթի անունը	ընդհ. բնակ. (հազար մարդ)	քրդալեզու բնակ. (հազար մարդ)	քրդալեզու բնակ. % -ով
Հաթաբի	68	55	80
Սղերդ	232	167	71
Բինյուլ	131	89	69
Մարզին	353	235	67
Դիարբեքիր	402	265	66
Բիթլիս	129	82	64
Ադրբ	215	130	60
Վան	211	108	51
Մուշ	168	84	50
Ուրֆա	402	152	38
Էրզրնջան	243	48	20
Կարս	544	101	19
Ադր յաման	234	34	15
Էրզրում	569	80	14
Մարաշ	390	52	13
Սիվադ	670	39	6

⁸ İsmail Beşikçi, Doğu Anadolunun düzeni. Ankara Cad, 1969, s. 50—51.

⁹ Աղյուսակը կազմված է հիմք ընդունելով հետևյալ հոդվածներում բեր-

Բնչպես երևում է աղյուսակից, որի տվյալները, անկասկած, նվազեցված են, քրդերը 8 վիլայեթում կազմում են բնակչության մեծամասնությունը: Քրդերը մեծամասնություն են կազմում նաև Մուշի վիլայեթում, որտեղ քուրդ բնակչությունը կազմում է 50 տոկոս (կամ¹⁰ տոկոս)¹⁰: Այստեղ բնակվում են նաև ոչ թուրքախոս այլ ժողովուրդներ, հիմնականում արաբախոս 2545 մարդ¹¹, և թուրքալեզու բնակչությունը կազմում է ամբողջ բնակչության 47 տոկոսը, այսինքն՝ ավելի ցածր, քան քուրդ բնակչության տոկոսը:

* * *

Քրդերը՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունների մեջ ամենից մեծ թիվն են կազմում: Սակայն ոչ մահմեդական փոքրամասնությունները, ճիշտ է խիստ սահմանափակումներով օգտվում են որոշ իրավունքներից՝ ինչպես մայրենի լեզվով ուսուցում, մայրենի լեզվով հրատարակություններ, իսկ քրդերը, որպես մահմեդականներ, չեն օգտվում ազգային փոքրամասնության որևէ իրավունքից:

Մուստաֆա Քեմալը, 1920 թ. մայիսին հանդես գալով մեջլիսում, ասում էր. «Այն մարդիկ, որոնցից կազմված է ձեր մեջլիսը, սոսկ թուրքեր չեն, սոսկ լազեր չեն, այլ կազմում են բոլորից բաղկացած մահմեդական տարրեր, անկեղծ մի ամբողջություն: Հետևաբար այն ժողովուրդը, որի պահպանությամբ ու պաշտպանությամբ են զբաղված, բնականաբար մեկ տարրից չի բաղկացած: Այն բաղկացած է զանազան մահմեդական տարրերից: Ցուրաքանչյուր մահմեդական տարր, որը մաս է կազմում այդ ամբողջության, մեր եղբայրն է, և լրիվ կերպով հասարակաց շահեր ունեցող մեր քաղաքացին»¹²: Իսկ 1925 թ. շեյխ Սաիդի գլխավորած քրդական ապստամբության ժամանակ Շեքեթ Սյուրեյյայի ասելով «հետադիմական մի ժողովուրդի պնդումները հերքելու համար» հատուկ պատրաստվում է զրթույկ, որը Աթաթուրքի հրամանով սպազորվում է 20 հազար

ված տվյալները՝ Filiz Babacan, Doğu ve güney-doğu Anadolu'da toprak durumu, „Forum“, 15. I. 1968, s. 20—21; Rakkamların dili, „Cumhuriyet“, I. IV. 1968,

¹⁰ Հստ „Cumhuriyet“, I. IV. 1968-ի տվյալի:

¹¹ „Cumhuriyet“, նույն տեղում. „Yön“, 18. XII. 1964. s. 9.

¹² A. Halûk Ülman, Ufuktaki tehlike, Kürt sorunu, „Forum“, I. XI. 1967, s. 15; Şêxê Nêzê Ataturkûn söylev ve demeçleri, C. I., Ankara, 1946.

տպաքանակով և տարածում են ամբողջ երկրում: Շեքեթ Սյուրեյ-
յայի մեջբերումից իմանում ենք, որ գրքուկի նպատակն էր ան-
խախտ պահել թուրք-քրդական «միասնությունը»՝ վկայակոչելով
քրդերի ծառայությունը անկախության պատերազմին: Այնտեղ
ասվում է. «Ազգային գերիշխանությունը ծնվել է բնական իրա-
վունքից, գործողությունից, ձեռք է բերվել արյունով և հասել
հաղթանակի՝ դաշնակից թուրք և քուրդ ժողովուրդների սրբազան
պայքարով»¹³:

Սրանք բոլորը, ինչպես հետագայում պարզվեց, լոկ հայտա-
րարություններ են եղել: Թուրքական կառավարող շրջանները
երբեք մտադիր չեն եղել որևէ կերպ ճանաչել քրդերի ազգային
իրավունքները:

Լոզանի դաշնագրում առավել հստակ կերպով սահմանվեցին
ոչ մահմեդական փոքրամասնությունների համար մի շարք իրա-
վունքներ, որոնց համաձայն էին նաև Թուրքիայի ներկայացուցիչ-
ները, քանի որ, նախ՝ ոչ մահմեդական փոքրամասնությունները
վեր էին ածվել լեզվա-կրոնական փոքրամասնությունների՝ ար-
մատախիլ եղած իրենց բնօրրանից, երկրորդ՝ այն հնարավորու-
թյուն էր տալիս պահանջելու փոքրամասնության իրավունքներ
նաև թուրքերի համար, որոնք բնակվում էին Բալկանյան երկրնե-
րում:

Թուրք պատգամավորները ուղղակի բացասում էին մահմե-
դական փոքրամասնությունների գոյության փաստը Թուրքիայում,
վկայակոչելով վերջին հաշվով կրոնի ընդհանրությունը:

Լոզանի խորհրդաժողովում, թուրք պատգամավորները հայտա-
րարել են, գրում է Ա. Հալլուկ Յուլմանը, որ «...պատմական ա-
վանդույթները, սովորություններն ու բարքերը կատարյալ միաս-
նություն են ստեղծել մեր երկրում բնակվող մահմեդականների
միջև և բացի ոչ մահմեդականներից, ոչ ոքի համար ազգային
փոքրամասնության հարց առաջ չի եկել: Կոնֆերանսում գտնվող
թուրք պատգամավորների գլխավոր նպատակն էր, — գրում է նա, —
ընդունել տալ արևմտյան պետություններին, որ մահմեդական
ժողովուրդը հանդիսանում է մի ամբողջություն և Թուրքիայում
կարող են գոյություն ունենալ միայն ոչ մահմեդական փոքրա-
մասնություններ»¹⁴:

¹³ Şevket Süreyya Aydemir. Նշվ. հոդվածը, „Akis“, 6. XI 1967, s. 14.

¹⁴ A. Halûk Ülman, Նշվ. հոդվածաշարը, „Forum“, 1. X. 1967, s. 13.

Ազգային հարցի այդպիսի դրվածքը սուր ծայրով ուղղված էր մահամեղական ազգային փոքրամասնությունների, հատկապես՝ քրդերի դեմ: Նա ձգտում էր նրանց պահել ազգային փոքրամասնության իրավունքներից զրկված վիճակում, հեշտացնելու համար նրանց ձուլումը, որպես ազգային հարցի «լուծման» և «տեղիտորիալ ամբողջությունը» պահպանելու միջոց:

Ա. Հալլուկ Յուլմանը անդրադարձել է այս հարցին այն պատճառով, որ 1967 թ. իրավաբանների միջազգային ասոցիացիան հանդես էր եկել Թուրքիայում բնակվող քրդերի՝ որպես ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանության մասին: Օտարերկրյա գործակալություններից ստացված տեղեկության համաձայն, «Յուրում» հանդեսում գրում է նա, — իրավաբանների միջազգային ասոցիացիան (I.C.I.), որի կենտրոնը գտնվում է Շվեյցարիայում, սեպտեմբերի սկզբին հրապարակած զեկուցագրով պնդում է, որ Թուրքական կառավարությունը ոտնահարում է Թուրքիայում բնակվող քրդերի իրավունքները և ջանում՝ ճնշել քրդական փոքրամասնությանը¹⁵:

«Իրավաբանների միջազգային ասոցիացիայի կարծիքի համաձայն, — գրում է Յուլմանը, — հակառակ այն բանի, որ Թուրքիան Լոզանի դաշնագրի 38-րդ և 39-րդ հոդվածներով խոստացել է հարգել մեր երկրում բնակվող փոքրամասնությունների իրավունքները, արգելում է քրդերին փոքրամասնության իրավունքներից օգտվելու, որոնց քանակը ներկայումս 2 կամ 3 միլիոն է: Օրինակ, արգելել է քրդերին լեզվի ուսուցումը դպրոցներում, քրդերին հրատարակությունները և արտասահմանում հրատարակված քրդերին գրքերի և քրդերին ձայնապնակների Թուրքիա բերելը: Նույն այդ զեկուցագրից իմանում ենք, որ Թուրքական կառավարությունը մի շարք շրջաններից քրդերին տեղահան է անում, աքսորում և դիմադրողներին էլ ոչնչացնում: Իրավաբանների միջազգային ասոցիացիայի կարծիքով Թուրքիան արարներին և բռնություններին է տեղավորում քրդերից ազատված սահմանագծի երկայնքով»¹⁶:

Ա. Հալլուկ Յուլմանի պնդմամբ Լոզանի պայմանագրի հիշյալ հոդվածները իրավական հիմք չեն տալիս պահանջելու քրդերի համար ազգային փոքրամասնության իրավունքներ, և դրանք

¹⁵ Նույն տեղում, էջ 12:

¹⁶ Նույն տեղում, էջ 12:

վերաբերում են ոչ մահմեդական փոքրամասնություններին: Նա նշում է, որ թեև որոշ պարագրաֆներում օգտագործվել են «բոլոր թուրքական քաղաքացիները» կամ «որևէ թուրքական քաղաքացի» բացատրությունները (օրինակ, որևէ թուրքական քաղաքացու համար կրոնի, մամուլի, մայրենի լեզվի ազատության ճանաչելը և այլն), բայց նրանց էությունը ևս եղել է նույնը՝ ապահովել ոչ մահմեդական փոքրամասնություններին՝ մահմեդականներին հավասար իրավունքներ: «...Իսկ ինչ վերաբերում է քրդերեն հրատարակությունները արգելելուն, որին դիմում են թուրքական կառավարությունները երկրի ամբողջականությունը և անվտանգությունը վտանգի մեջ տեսնելիս, եթե միջազգային կազմակերպությունները այդ որակում են որպես լուրանի պայմանագրի խախտում, ապա նրանց պետք է հիշեցնել, որ երկրի ամբողջականությունը և անվտանգությունը վտանգվելու դեպքում ամեն միջոցառում մտնում է տվյալ պետության ազգային իրավասության մեջ և այդ իրավասությունը չի կարելի սահմանափակել ոչ մի միջազգային պարտավորությամբ»¹⁷:

Համաձայն 1924 թ. սահմանադրության 88-րդ հոդվածի բոլոր թուրքական քաղաքացիները համարվում էին թուրք («Թուրքիայի ժողովուրդը առանց կրոնի և ցեղի խտրության քաղաքացիական տեսակետից կոչվում է «թուրք»»)¹⁸:

Սա յուրահատուկ մի նացիոնալիզմ էր, որը դեմոկրատիայի քողի տակ, իբր թե հակադրվելով ռասիզմին («առանց ցեղի և կրոնի խտրության»), ազգային փոքրամասնություններին և էթնիկական խմբերին դիտում էր որպես «միասական թուրք ազգի» կազմավորմանը ծառայող բնական տարրեր:

1961 թ. ընդունված նոր սահմանադրությունը ևս թուրք է համարում բոլոր թուրքական քաղաքացիներին (հոդված 54)¹⁹, և դատական իշխանությունների կողմից պատժվում են այն քաղաքացիները, ովքեր հանդես են գալիս այդ նացիոնալիստական տեսակետին հակասող հայացքներով:

Այդ մասին է խոսում հետևյալ փաստը. «Ջումհուրիյեթ» թերթը գրում է, որ Մուսա Անթերը 1965 թ. լույս ընծայեց թուրքերեն-

¹⁷ Նույն տեղում, էջ 22:

¹⁸ Սահմանադրության տեքստը տես. «Türkiye Cumhuriyeti Devlet Yılı», Cilt. 4., İstanbul, 1929.

¹⁹ «1962 Türkiye Yılı», s. 28

քրդերեն մի գիրք՝ «Սև ցավ» (Kara Yara-Brina Reş): Նա այդ գրքի համար դատապարտվեց՝ մամուլում պառակտիչ գործունեություն ծավալելու մեղադրանքով, սակայն դատավարության վերջում անպարտ ճանաչվեց: Բայց բարձրագույն դատարանը նկատի առնելով դատախազության բողոքը, միաձայն բեկանեց անպարտ ճանաչելու որոշումը, այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալը արևելյան վիլայեթներում բնակվող ժողովրդի մեկ մասին որակում է քուրդ, հայտնում է, որ տարբեր ցեղերի են պատկանում, տարբեր լեզվով են խոսում, հետևաբար «մեղադրյալը շոշափելով ցեղի և լեզվի գործոնները, որոնք «ազգություն» հասկացության հիմնական սկզբունքներից են, մեր մի շարք քաղաքացիներին բնութագրելով որպես քրդեր, հետապնդում է անշատողական, պառակտիչ և հետևաբար ազգային զգացումները թուլացնող նպատակ»²⁰:

Ներկա հոգվածում ընթերցողը կնկատի բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ այդ տեսակետը երբեք չի դադարել տիրապետող դառնալուց: Բավարարվում ենք փոխադրելով քրդերին «եղբայրներ», «անխառն թուրքեր» համարող Արգու-հադի Թոփուի հետևյալ տողերը, որտեղ պարզ երևում է այն կապը, որ կա քրդերին թրքություն վերագրող տեսակետի և նրանց աղգային իրավունքներից զրկված պահելու ձգտումի միջև. ահա նա ինչ է գրում՝ «...Ուզում եմ խոսել վերջերս լույս տեսնող քրդերեն պարբերականների աշխատակիցների մտայնության մասին: Այս խեղճերը արդյոք ի՞նչ են ուզում անել, քրդերեն հրատարակություններ կատարելով, մասագրեր լույս ընծայելով, պահանջելով քրդերեն ուսուցում, ռադիոհաղորդումների ընթացքում քրդերեն հաղորդումներ, ժողովրդական երգեր: Դա բացահայտ կերպով չի նշանակում, որ իրենք տարբեր ցեղի են պատկանում, տարբեր հավաքականություն ու փոքրամասնություն են, թող տրվեն նրանց այդ իրավունքները, և իրենք չեն ցանկանում անշատվել թուրքական պետությունից, այլ ուզում են տեղ գրավել ֆեդերատիվ մի կազմի մեջ, ինչպիսին է Շվեյցարիան»:

«Այդ դեպքում պետք է ասեմ հետևյալը... հսկա մի կայսրությունից ամփոփվեցինք հայրենիքի մեկ թզանոց կտորին վրա: Էլ չենք հանդուրժի առավիլ ևս փոքրանալու»²¹:

²⁰ Bir kürtcülük sanığının beraet kararını Yargıtay bozdu, „Cumhuriyet“, 13. II. 1968.

²¹ Abdülhâdî Toplu, Milliyetçilere açık mektup, „Yeni İstanbul“, 7. III. 1967.

Որոշ հեղինակներ փորձում են համոզել, որ քրդերը ծագումով թուրանական մի ցեղ են՝ թուրք օղույների մի ճյուղը²², քրդերի թուրքական ծագումը հիշեցնելու համար օգտվում են նույնիսկ միջանկյալ նախադասություններից։ Ահա ինչ են գրում այդ թուրքամոլ շովինիստ հեղինակները՝ «...մեր արևելյան վիլայիթների բնակչությունը, որը ամբողջությամբ և անխառն կերպով թուրք է»²³։ «Արևելյան վիլայիթներում բնակվող մեր մի շարք քաղաքացիները, որոնք արյան, ցեղի, ավանդությունների, սովորույթների տեսակետից թուրքեր են»²⁴, «Քրդերը, որոնք ծագումով թուրք են» և այլն²⁵։ Ուրիշները քաջ գիտենալով, որ քրդերի ծագման վերաբերյալ այդ «տեսակետը» համոզիչ չէ, փորձում են գտնել քրդերի թրքությունը ապացուցելու այլ եղանակներ, ըստ որի քրդերը իբր մեծ մասամբ լեզվափոխ, քրդացած թուրքեր են և քրդերի թրքացումը տեղի է ունեցել մոտ անցյալում։ Իսմայիլ Հյուսրեք 1934 թ. անդրադառնալով այդ հարցին, գրում էր. «...ներկայումս ևս այս երևույթը շարունակվում է ամենայն թափով»²⁶։ Թուրքերի քրդացման մասին իր տեսակետը հիմնավորելու համար նա վկայակոչում է Յուսուֆ Մազհարի 1925 թ. «Զումհուրիյեթ» թերթում հրատարակած «Ապստամբության շրջանում 1800 կմ» խորագրով հոդվածը և Ալի Քեմալիի 1932-ին հրատարակած «Էրզինջան» վերնագրով գիրքը, որտեղ ասվում է. «Նկատի ունենալով, որ այս երևույթը շարունակվում է վարակիչ կերպով, արժի մտածել այդ վայրերում բնակվող թրքության ապագայի մասին»²⁷։ Նման պնդումները նպատակ ունեն արդարացնելու կառավարող շրջանների՝ քրդերին ձուլելու, բռնազաղթի ենթարկելու, բնաջնջելու ճանապարհով քրդական հարցը լուծելու քաղաքականությունը։ Ինչպես տեսանք՝ թուրքական պաշտոնական վիճակագրական տվյալները չեն հաստատում թուրքերի «ամենայն թափով», «վարակիչ կերպով» քրդանալու վերաբերյալ պնդումները, իսկ 1935 թվականից սկսած

²² Kırzioğlu M. Fahrettin, Her bakımından Türk olan kürtler, I. Bölüm. Ankara, 1964; Abdülhadi Toplu, *Զգված հոգվածաշարք*, «Yeni İstanbul», 4. III 1967; «Türkiye Ansiklopedisi». C. III, s. 513.

²³ Nuredîdin Pakyûrek, Doğu mitingli, «Yeni İstanbul», 5. X. 1967.

²⁴ Kıverlioglu, Komünizm ve kürtcülük faaliyeti, «Yeni İstanbul», 20-VIII. 1967.

²⁵ Tahsin Ünal, Türk siyasi tarihi, ikinci baskı, Ankara, 1958, s. 267.

²⁶ İsmail Hüsrev, Türkiye köy iktisadiyatı, Ankara, 1934, s. 182—184.

²⁷ Նույն տեղում, էջ 183:

քրդականություն բնակչության հարաբերական, երբեմն նույնիսկ բացարձակ նվազումը, խոստում է այն մասին, որ ճիշտ հակառակն է ճշմարտությունը:

Նման պնդման մենք հանդիպում ենք ոչ միայն սոցիոլոգիական, քաղաքական, պատմական բնույթի հոգվածներում, այլ անգամ թուրքական լեզվաբանների միության կողմից հրատարակված Մեմեդ Ալի Աղալայի բառարանում²⁸, որտեղ «թուրք» բառի դիմաց տրվում է հետևյալ բացատրությունը. «Թուրք.—անունը մի հավաքականության և անձ՝ որ պատկանում է այդ հավաքականության, որը բնակվում է Թուրքիայում, Իրաքում և Իրանում, և մեծ մասամբ բաղկացած է լեզվափոխ թուրքերից, և որը խոսում է աղճատված պարսկերենով»: Համեմայնդեալս ոչինչ չի ասվում այն մասին, թե ովքեր են մնացած «փոքր մասը»:

Փորձեր են եղել նաև նենդափոխված ձևով ներկայացնելու քրդերեն լեզուն, որպեսզի «ցույց տան», որ նա չի կրում էթնիկական բնույթ, որպեսզի վերացնեն նաև այն «միակ տարբերությունը», որ կա թուրքերի և քրդերի միջև:

Թուրքական հանրագիտարանում կա համանման պնդում, որ իբր քրդերը չունեն կազմավորված լեզու: Քրդերենը հանդիսանում է ղանազան լեզուների խառնուրդ: Այն բաղկացած է 8728 բառից²⁹, Հանրագիտարանում կա նաև աղյուսակ, ուր տրված են այն լեզուները, որոնցից, իբր, փոխառություն է կատարվել և յուրաքանչյուրից՝ փոխառության քանակը: Աղյուսակի համաձայն միայն 300 բառ բուն քրդերեն է, և փոխառությունները մեծ մասամբ կատարված են թուրքերենից:

Աղյուսակը կազմել է արևելագետ Ֆրիլը, որպես գաղափարախոսական օժանդակություն երիտթուրքերի պանթուրքիստական քաղաքականության: Աղյուսակը առաջին անգամ լույս է ընծայվել թուրքերեն լեզվով՝ Թուրքիայի գաղթականների գլխավոր վարչության կողմից 1915 թ.: Հետագայում հանրապետական Թուրքիայում ևս նույն նպատակով քանիցս օգտագործել են այդ աղյուսակը: Աղյուսակի և նրա մեկնարանների պնդմամբ, քրդերենում կա 3080 թուրքերեն բառ: Ինչ վերաբերում է 2000 արաբերեն և 1030 պարսկերեն բառերին, դրանք արդեն գոյություն ունեն թուր-

²⁸ „Türkçe Sözlük“, Hazırlayan. Mehmet Ali Ağakay, Dördüncü baskı, Ankara, 1966.

²⁹ „Türkiye Ansiklopedisi“, c. III, s. 513.

քերեկում, թուրքական լեզվի կողմից յուրացված, թուրքացած բառեր են, և քրդերենի համար դրանց փոխառության աղբյուրը եղել է թուրքերենը, թուրքերեն են նաև բուն քրդերեն համարված բառերից 170-ը:

Այսպիսով, քրդերենում թուրքերեն բառերի թիվը հասնում է 6217-ի: Ուրեմն քրդերեն բառերի 74 տոկոսը թուրքերեն են և հիմնականում տարբերություններ չկան թուրքերենի և քրդերենի միջև: Գոյություն ունեցող ոչ հիմնական տարբերությունները կարելի է բացատրել միջավայրի տարբերություններով: «Այս բոլորը վկայում են այն մասին, որ քրդերը թուրք են» եզրակացնում են նրանք:

Թուրք քաղաքական գործիչ և արևելագետ Ջելադեթ Ալի Բեդրիսանը 1933 թ. հրատարակած «Նամակ Թուրքիայի հանրապետության նախագահ հորին վսեմության Ղազի Մուստաֆա փաշային» վերնագրով (95 էջ) գրքուկի³⁰ ավելի քան 35 էջում խոսում է լեզվի մասին, որի մեջ նա ցույց է տալիս, թե ինչպես թուրք հնդկականները նենգափոխում են քրդերի և նրանց լեզվի պատմության հարցերը:

Մենք այստեղ տալիս ենք միայն Բեդրիսանի հետևություններից մի քանիսը, որոնք վերաբերում են վերոհիշյալ աղյուսակին.

1. Ձի կարելի խոսել քրդերեն լեզվում բառերի բացարձակ քանակության մասին, քանի դեռ գոյություն չունի քրդերեն բոլոր բառերը բովանդակող ընդհանրական մի բառարան:

2. Արաբերեն բառերի փոխառությունները կատարված են ոչ թե թուրքերենից, այլ ուղղակի արաբերենից: Այդ մասին է վկայում այն, որ քրդերենում գոյություն ունեցող արաբական բառերը չեն կրում թուրքերենի հնչյունաբանական հետքերը և, որ գլխավորն է, քրդերենը արաբերենից նոր բառեր կազմելիս վերադառնում է արաբերենի երեքտառանի արմատներին և այն յուրացնում հատուկ օրինաչափություններով:

3. Պարսկերեն փոխառությունների համար առավել ևս չի կարող միջնորդի դեր խաղացած լինել թուրքերենը, քանի որ պարսկերենը և քրդերենը հնդեվրոպական ընտանիքի միևնույն ենթախումբն են պատկանում: Այստեղ ընդհանրությունները հիմնական

³⁰ Օգտագործել ենք ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտում պահվող հայերեն թարգմանությունը:

նում արտահայտվում են նրանց ծագումնաբանական ընդհանրությունները և չի կարելի դրանք դիտել որպես փոխառություններ՝ անցած մեկ լեզվից մյուսին: Իհարկե փոխառություններ ևս կարող են լինել այդ լեզուների միջև, այնուամենայնիվ, այստեղ շատ ավելի լուրջ ուսումնասիրություններ են պետք որոշելու համար, թե դրանք իսկապես փոխառություններ են թե՞ ծագումնաբանական ընդհանրություններ, և որն է տվյալ դեպքում փոխառու լեզուն:

4. Թուրքերենի և քրդերենի հնչյունաբանական, ձևաբանական, շարահյուսական օրինաչափությունների համեմատությունը ցույց է տալիս, որ թուրքերենի և քրդերենի միջև ավելի շատ տարբերություններ կան, քան նմանություններ, իհարկե, չհաշված այնպիսի օրինաչափություններ, որոնք ընդհանուր են ամեն մի առանձինի կամ մի շարք առանձինների համար:

Թուրքական բուժուական գաղափարախոսներին առայժմ այնքան էլ չի անհանգստացնում այն, որ աշխարհում բազմաթիվ գիտնականներ ուսումնասիրել և ուսումնասիրում են քրդերենը որպես ինքնուրույն լեզու, որ Ջելադեթ Բեդրխանը բացահայտել է նրանց «գիտական» կեղծարարությունը: Նրանց համար կարևորն այն է, որ երկրի ներսում, օրենքի ուժով, չեն արտոնում գիտական, այն էլ լեզվաբանական ճշմարտությունների բացահայտումը և նորից ու նորից կրկնում են նույն պնդումները:

Նույն տեսակետն է պնդում նաև Աբգուհհադի Թոփուլուն: Նա հանդում է այն եզրակացության, որ թուրք-քուրդ առանձին ժողովուրդներ չկան, որ այդ նույն թուրք ժողովուրդն է, որի արևելքում բնակվող հատվածը արևմտյան հատվածի համեմատությամբ, աշխարհագրական դիրքի տարբերության հետևանքով, գուցե մի քիչ ավելի փոխառություններ է կատարել հարևան ժողովուրդների լեզուներից: Նա գրում է. «Հաճախ են խոսում մեր այս եղբայրների, անխառն թուրքերի, լեզվական տարբերության մասին: Որն է աթլ լեզվական տարբերությունը: Քրդերենը վերլուծելիս նկատվում է, որ այն արաբերենի, պարսկերենի, թուրքերենի, հայերենի խառնուրդ է: Այդ խառնուրդի մեջ հարավ արևելյան Անատոլիայում ավելի շատ են արաբերեն, արևելյան Անատոլիայում՝ պարսկերեն բառերը: ...Արևելյան Անատոլիան երեք տարբեր ազգերի հանգուցակետն է: Այս հանգուցակետում բնակվող մարդիկ թե խաղաղություն, թե սպառնալուծի ժամանակ սերտ կապ են ունեցել այդ շրջանների հետ: Առևտրի համար գնացել են ու եկել Արաբիա և Իրան: Սովորել են այդ երկրների լեզուները: Բացի դրանից հայտ-

նի է, որ թուրք սելջուկների պետությունը ճիշտ հարյուր տարի որպես պաշտոնական լեզու ընդունեց և օգտագործեց արաբերենը: Դրանից հետո 400 տարի պարսկերենը հանդիսացել է թուրքերի, մասնավորապես օսմանյան թուրքերի գրական լեզուն»³¹:

Նման «թեորիայի» խիստ անհեթեթությունը ակնհեր է, հակառակ դեպքում ինչո՞վ բացատրել, որ թուրք լեզվաբանները թուրքերեն լեզվի բարբառներն ու ենթաբարբառները դասակարգելիս «մոռանում են» քրդերենը մտցնել այդ դասակարգման մեջ:

Այդ մասին է վկայում այն, որ Մեհմեդ Ալի Աղակայը, որը քսանմեկ տարի վարել է թուրք լեզվաբանների միությունն բառարանագրության հանձնախմբի նախագահությունը, քաջ գիտենալով քրդերենի վերաբերյալ այդ թեորիայի անհեթեթությունը, քրդերենի, որպես ինքնուրույն լեզվի գոյությունը հերքում է այլ կերպ. նկատի առնելով, որ քրդերենը շատ ու շատ ընդհանրություններ ունի պարսկերենի հետ, քան թուրքերենի, և այդ ընդհանրությունները գրչի մեկ հարվածով նենգափոխելով նա քրդերենը համարում է աղճատված պարսկերեն: Իհարկե, չհրաժարվելով քրդերին թուրք համարելուց: Նրա կարծիքով, ինչպես վերևում տեսանք, քրդերը լեզվափոխ թուրքեր են, որոնք խոսում են աղճատված պարսկերենով:

Այսպիսով, Աղակայը հակասում է մյուս տեսակետներին: Իսկ Օսման Յուկսել Սերդենգեֆին, որը նույնպես քրդերին համարում է թուրք, հայտնում է, որ լեզուն ազգերի միակ տարրերից հատկանիշը չէ³²:

Թուրքական նացիոնալիստները նույնիսկ չեն վիճում իրար հետ այս հակասությունների համար: Նրանք իրենց հակասություններով հանդերձ ձգտում են նույն նպատակին. «ապացուցելու», որ Թուրքիայում միայն թուրքեր կան: Այսպիսով առավել բազմազան են դառնում գաղափարախոսական ներգործման եղանակները:

* * *

Ազգային և սոցիալական ճնշումը պատճառ դարձավ մի շարք քրդական ապստամբությունների: Թուրքական մամուլում իր

³¹ Աբդուլհալի Քոփուլ, Նշվ. հոգվածաշարը, „Yeni İstanbul“, 4. III: 1967.

³² Osman Yüksel Serdengefti, Doğru-Bati, „Yeni İstanbul“, 20. VIII. 1967.

պատմական նշանակութիւն պատճառով, ավելի շատ խոսվում է 1925 թ. ապստամբութեան մասին: Ինչպես միշտ, այս անգամ ևս, թուրքական մամուլը գերազնահատելով ղեկավարներին ու արտաքին ազդեցութեան դերը և լուսթիւն մատնելով շարժման օրէնկտիվ պատճառները, ցանկանում է ստեղծել այն պատրանքը, որ իբր ոչ թուրք ժողովուրդները երբեք չեն դժգոհել թուրքական լծից: «Անգլիացիներն են գրգռել, կամ շեյխերն ու աղաներն են գրգռուել»³³, «հայ կոմիդաչիներն են գրգռել»³⁴ և այդքան: Եթե նույնիսկ խոսում են շարժման բուն պատճառների մասին, ապա դրանց տալիս են երկրորդական նշանակութիւն, դրանք համարելով ոչ թե պատճառ, այլ առիթ: Օրինակ՝ Ա. Հալլուկ Յուլմանը խոսելով «վերջերս ժողովրդական խավերի մեջ լայն տարածում գտնող քրդական նացիոնալիզմի» մասին, գրում է. «Եթե աղքատ ժողովուրդը լսում է այդ գրգռութիւնները, դրա պատճառը այն է, որ նրանք ձանձրացել են այն մթնոլորտից, որի մեջ գտնվում են, նրանք ձանձրացել են իրենց կյանքից: Եթե նրանք դո՛ւ լինեին իրենց սոցիալական և տնտեսական կյանքից, եթե իրենց համար շահավետ գտնեին թուրքական սահմաններում գտնվելը, մի՞թե կընկնեին այն մի բուռ մարդկանց՝ իրենց շահագործողների (աղաների, շեյխերի—Հ. Գ.) հետեից»³⁵:

Հետաքրքիր է նաև այն, որ պրեմիեր-մինիստր Ֆեթհի բելը քրդական ապստամբութիւնը իր ժամանակի թուրքական մամուլում ներկայացրել է որպէս բանդիտական շարժում³⁶: Իսկ Մուստաֆա Բեմալը օգտագործելով այն փաստը, որ ապստամբութեան ղեկավարները քրդական զանգվածներին իրենց հետեից տանելու համար օգտագործում էին կրօնը, ձգտում է երևույթը որակել որպէս հակահեղափոխութիւն, երկրում ընդհանրապէս գազազած ունակցիայի մի օղակը³⁷: Երկու դեպքում էլ ոչ մի խոսք չկա քրդական ազգային շարժման մասին:

³³ Իսմայիլ Հյուսիւ, նշվ. աշխ., էջ 180—182, Եիկեր Սյուրեյյա Այդեմիր, նշվ. հոդվածը: Ա. Հալլուկ Եուլման, նշվ. հոդվածաշարը, «Forum», 15. X. 1967, s. 13 1925; Kürt isyanı ve şeyh Salt, «Akis», 27. XI. 1967, s. 26.

³⁴ Erdog̃an Arıpinar. Ermeni meselesi ve perde gerisi, «Yeni İstanbul» 16. VII, 1968.

³⁵ Ա. Հալլուկ Եուլման, նշվ. հոդվածաշարը, «Forum», 1. 11. 1967, s. 14.

³⁶ 1925 Kürt isyanı ve şeyh Salt, «Akis», 6. XI. 1967, s. 26. հոդվածաշար՝ հետազայում հրատարակված գրքի ձեռն. Meîin Toker, şeyh Salt ve isyanı Ankara, 1968).

³⁷ Նույն տեղում, էջ 26:

Թուրքական կառավարող շրջանները դրանով սրբազործում էին ապստամբների և խաղաղ բնակչության դեմ գործադրված բռնությունները, քանի որ արդեն կանխավ նրանք հայտարարված էին «բանդիտներ», «ռեակցիոն հակահեղափոխականներ», և կառավարական օրգանները առիթը օգտագործեցին արտակարգ միջոցների դիմելու համար. նրանք դատաստան տեսան ոչ միայն ապստամբության ղեկավարների, այլև բոլոր ընդդիմադիր տարրերի և կազմակերպությունների հետ:

* * *

Քրդական ապստամբությունները անխնա ճնշվեցին, բայց ապստամբության օբյեկտիվ պատճառները շարունակում էին գոյատևել:

Նման պայմաններում, հասկանալի է, թուրքական կառավարող շրջանների և նրանց զաղափարախոսների համար խիստ անցանկալի էր քրդական ազատագրական շարժման ծավալումը Իրաքում: Նրանք դրա մեջ տեսան Թուրքիայի համար օրինակ ծառայելու վտանգը:

Իրաքի քրդերի ազատագրական շարժումը թուրքական կառավարող շրջաններին և բուրժուական մտավորականությանը մտահոգություն էր պատճառում ոչ միայն Թուրքիայի քրդերի համար օրինակ լինելու տեսակետից: Նրանք գտնում էին, որ ավտոնոմիայի համար Իրաքի քրդերի մղած պայքարը միայն մի էտապ է և հաջողությամբ պսակվելու դեպքում չի սահմանափակվելու հյուսիսային Իրաքով, շոշափելու է նաև «Թուրքիայի շահերը»:

Հարցին այդպիսի մտահոգությամբ են մոտենում նույնիսկ թուրքական որոշ «սոցիալիստներ»: Օրինակ՝ Իլհան Սեւուլը, որը ըստ երևույթին մտովի զուգահեռ է անցկացնում պանթուրքիզմի և իրենից անկախ պատճառներով այլ պետությունների քաղաքական սահմաններով մասնատված քուրդ ժողովրդի միավորման բաղձանքի միջև, իր այդ մտահոգությունը արտահայտում է հարցականի տակ դնելով Բարդանու նպատակը: «Դրանցից (արտասահմանյան քրդակսոն շարժումներից—Հ. Գ.) ամենակարևորն է պանթուրքիզմի, այսինքն՝ քրդալեզուներին մեկ պետության մեջ կենտրոնացնելու հոսանքը: Բարդանին ընկնում է արդյոք նման մի ցանկության ետեից, թե աշխատում է միայն Իրաքի քրդերի անկախության համար»³⁸:

³⁸ İlhan Selçuk, Kürt meselesi, „Cumhuriyet“, 25. IV. 1966.

Այս մտահոգությունը արտահայտվում է նաև բացահայտ կերպով: Չինվորական մի հրամանատար հայտնում է «Աքիս» ժուռնալին. «Սրբ Բարդանին ընդունել տա Քրդստանի պետության կորիզը, գործունեության է անցնում որպեսզի նրան կցի նաև Թուրքիայի և Իրանի մի շարք շրջանները»³⁹:

Իսկ Կայհան Սաղլամերը, արժարժեքով այդ հարցը, որպես տիրապետող դասակարգի գաղափարախոս, ազգերի ինքնորոշման իրավունքի մասին բանավեճի է մտնում իր ձեռքում ունեցած մուհակներով, պայմանագրերով և ահա թե ինչ է ասում. «Հինգ միլիոն քրդերի, որոնց ավելի քան մեկ միլիոնը Իրաքում է բնակվում, բուն ցանկությունն է անկախությունը, որին երբեք չեն տիրացել պատմության ընթացքում: Քրդստանի հանրապետություն, որը սնվելու է Մուսուլի նավթով: Ավտոնոմիան, անկախության հանգրվաններից մեկն է: Նրանց միակ իրավական հենակետը Սևրի պայմանագիրն է, որ ինքնորոշման իրավունք էր շնորհում քրդերին: Բայց 1923 թ., Լոզանի պայմանագրով պատմվեց այդքան կարճատև կյանք ունեցող Սևրի պայմանագիրը, և այն հողերը, որոնց մասին երազում էին քրդերը, մնացին Թուրքիայի, Իրանի և Իրաքի սահմանների միջև: Որևէ դիշում էլ ավելի է պահանջկոտ դարձնելու քրդերին, և նրանց քաջալերելու է իրենց պայքարի մեջ, որի նպատակն է անկախությունը»⁴⁰:

* * *

Թուրքական կառավարող շրջաններին և բուրժուական մտավորականությանը քիչ չի զայրացնում այն, որ արտասահմանյան մի շարք քրդական կամ ոչ-քրդական կազմակերպություններ, թերթեր, ամսագրեր, գրողներ հաճախ անդրադառնում են Թուրքիայի քրդերի իրավազուրկ վիճակին⁴¹:

«Քրդական վտանգի» պատրվակը օգտագործվեց որպեսզի խիստ վերահսկողություն սահմանվի քրդաբնակ վիլայեթներին

³⁹ *Kürtçülük*, „Akis“, 6. X. 1967, s. 15.

⁴⁰ *Kayhan Saglam*, Abdurrahman Arif ve Kürtler, „Cumhuriyet“, 23. IV. 1966; *Kayhan Saglam*, Kürtler, petrol ve biz, „Yeni İstanbul“, 15—5. 1969.

⁴¹ Iran³shahına Yıldırım muhtıra gönderildi, „Yeni İstanbul“, 30. VIII. 1968; Iran basını Türkiye aleyhinde sistemli kampanyaya girişti, „Cumhuriyet“, 3. XI. 1968; Kürt talebe federasyonu Berlinde toplandı, „Cumhuriyet“, 26. VIII. 1968; *Kurtul Altug*, Tehlikeli arzular, „Yeni İstanbul“, 3. IX. 1968; Görülmemiş rezalet, „Yeni İstanbul“, 3. IX. 1968.

վրա: Թուրքական մամուլի հաղորդումների համաձայն իրադրությունը երկրի ներսում միխթարական շէր և քրդական ազգայնականների ընդհատակյա գործունեությունը արդեն փաստ էր համարվում:

Թուրքական թերթերը հաճախ հաղորդում էին քուրդ նացիոնալիստների հայտնաբերման և ձերբակալման մասին⁴²: Ուշագրավ է, որ այդ կարգի հակաքրդական միջոցառումները մեծ մասամբ արդարացվում էին Իրաքի քրդական շարժման հետ կապ ունենալու հանգամանքով:

Հաղորդում էին, օրինակ, մաքսանենգների, քանդիտների և այլոց՝ Բարզանու հետ կապ ունենալու, նրան զենք մատակարարելու, այլ օժանդակություններ կատարելու, կամավոր կամ բռնությամբ Բարզանու համար փող հավաքելու⁴³, Բարզանու զինվորների կողմից Թուրքական սահմանը խախտելու, Թուրքական ժանդարմերիայի հետ դինկաժ բախումներ ունենալու մասին⁴⁴:

Իհարկե, պետք է խիստ վերապահությամբ ընդունել Թուրքական մամուլի այս հաղորդումները: Վերապահությունը թելադրվում է հենց Թուրքական մամուլի նյութերից: Այդ մասին երկար չթանալիճելու համար նշենք կասկած հարուցող մի քանի փաստերի մասին:

«Ակշամ» թերթի աշխատակից Հուլուսի Թուրկութը այցելել էր Բարզանուն: Հարցը միայն այն չէր, որ Բարզանին հերքեց իր անվան հետ առնչվող վերը նշված դեպքերը, այլ նաև այն, որ հոգ-

⁴² Şerefhanoglu senatörlükten çıkarıldı, „Akşam“, 23. VII. 1967; Diyarbakırda gerici ve kürtcü 15 kişi ile birçok kitap ele geçti, „Ulus“, 26. I. 1968; Kürtcülükten sanık 6 kişi tutuklandı, „Ulus“, 26. I. 1968; Kürt devletinin 3 üyesi daha ele geçti, „Yeni İstanbul“, 1. II. 1968; Aranan kürtcülük sanıklarından biri daha yakalandı, „Cumhuriyet“, 13. II. 1968; YTP’li Karahanın dokunulmazlığı kaldırıldı, „Cumhuriyet“, 22. X. 1968.

⁴³ Barzani adına vergi toplanması olayına hükümet el koydu, „Cumhuriyet“, 14. IV. 1967; Diyarbakırda yakalanan 14 sanık Barzaniye yardım mı ediyordu?, „Ulus“, 27. I. 1968; Kaçak silâh ve mermilerin Barzaniye götürüldüğü tespit edildi, „Cumhuriyet“, 22. X. 1968; Barzaniye vergi toplanan 4 AP’li tevkif edildi, „Cumhuriyet“, 22. III. 1968; Barzaniye silâh kaçırınan şebeke ele geçti, „Akşam“, 20. I. 1969; Barzaniye para temin eden 4 kişi tutuklandı, „Vatan“, 5. II. 1969; Mecliste Barzaniye silâh kaçırıldığı ileri sürüldü, „Cumhuriyet“, 21. XI. 1968.

⁴⁴ Bu ne biçim, iş ? „Akşam“, 15. VIII. 1967; Barzani askeri Türkiye’de cirit atıyor, „Akşam“, 26. VIII. 1967; Barzani erleri ile çatışan jandarmamız iki şehit verdi, „Yeni İstanbul“, 22. IX. 1968.

վածագիրը հասարակական կարծիքին ներկայացնելով Բարդանու
բացատրությունները, գոհունակություն էր հայտնում դրա առթիվ⁴⁵։
Սակայն այդ շխանգարեց նույն «Ակշամ» թերթին, որպեսզի հող-
վածաշարի հրատարակության ընթացքում լույս աշխարհ հաներ նոր
մի հաղորդագրություն, որով տեղեկացվում էր, որ իբր մաքսա-
նենգները ղենք են մատակարարում Բարդանուն⁴⁶։

Մեղ վերապահության մղող պատճառներից մեկն էլ այն է, որ
ձերբակալությունները կատարվում են հաճախ չհիմնավորված
փաստերով։ Այդ մասին է վկայում այն, որ 1959 թ. հայտնաբերված
«ընդհատակյա հսկա ցանցի» անդամները, թեև մինչև դատավա-
րության սկսվելը ամիսներով շարշարվեցին բանտերում, միանգա-
մից ազատ արձակվեցին գլխավոր շտաբի զինվորական դատարանի
կողմից⁴⁷։ Այնուհանդերձ, թուրքական բուրժուական մամուլը այդ
բոլորը արձանագրելով որպես փաստ, հիմնավորում է իր մտահո-
գություններն ու դրանից բխող հակազդեցության անհրաժեշտու-
թյունը։

Այլ մամուլը այս բոլորը օգտագործելով որպես առիթ, նպատակ
ունի ահաբեկել քրդերին, ծավալել նացիոնալիստական, հակակո-
մունիստական կամպանիա, հայտարարելով, որ «կոմունիստները
զրգոում են քրդերին, ուզում են մեր երկիրը բաժան-բաժան ա-
նել»⁴⁸։

Թուրքական այլ մամուլը և պանթուրքիստները նույնիսկ առա-
ջարկեցին կոնկրետ բռնի միջոցառումներ (գնչուներին ձուլել քրդերի
հետ)⁴⁹, «Միջին Ասիայից թուրքալեզու զինված ժողովուրդներ բերել
և բնակեցնել քրդերի մեջ» և այլն⁵⁰։

⁴⁵ *Hulusi Turgut*, Kürdistan dosyası, „Akşam“, 16. IX, 1968, 17. IX 1968, 12. X. 1968, 20. X. 1968.

⁴⁶ Barzanlıye giden silâhlara el kondu, „Akşam“ 14. X 1968.

⁴⁷ *Ziya Selçuka Cevap*, „Yöne“, 13. XI. 1964.

⁴⁸ *Nurettin Pakyürek*, Komünistler, çıkarıcılar ve biz, „Yeni İstanbul“, 28. VI. 1967; Կիվերլիօղլու, Նշված հոդվածը; Օսման Բուլսիլ Սերդենգեօռի, Նշված հոդվածը; Doguda komünist ve kürtcü işbirliği, „Yeni İstanbul“, 3. IX. 1967; Sol doguyu tahrik ediyor, „Yeni İstanbul“ 2. IX. 1967; *Nejdet Sancar*, Dogu Anadolu meselesi ml. Kürdistan devleti meselesi mi?, „Yeni İstanbul“, 15. IX. 1967; Nihal Atsızın duruşmasında yüzlerce genç tezahürat yaptı, „Yeni İstanbul“, 21. IX. 1967; *Osman Yüksel, Serdengeçti*, Dogu mitingleri, „Yeni İstanbul“, 30. X. 1967; *Nejdet Sancar*, Kürtcülüğü sayu, nan AP senatorü, „Yeni İstanbul“, 3. XII, 1967; 40 Milliyetçi teşekkül bil-diri yayımlandı, „Yeni İstanbul“, 30. X. 1967.

⁴⁹ *Sü. Çetin Altan*, Dogu illerimizdeki üzüntü, „Akşam“, 12 IV. 1967.

⁵⁰ *Sü. İsmail Fehri Kızıllı*, Նշվ. աշխ., էջ 247, տե՛ս նաև „Milli Yol“, 20. IV. 1967.

Թուրք հայտնի ուստիստ-պանթուրքիստ Նիհալ Ատսըզը այնտեղ հասավ, որ հայերի նկատմամբ կիրառված գենոցիդով էր սպառնում Թուրքիայի քրդերին⁵¹։ Վենեա Թուրք ազգի գլխին փորձանքներ չփաթաթած, իրենք ևս անհետ չկորած, թող հեռանան զնան։ Հարցնելու եք թե ո՞ւր։ Թող զնան ուր որ կուզեն։ Թող զնան Իրան, Պակիստան, Հնդկաստան կամ Բարդանու մոտ։ Այն մասին, թե թուրք ցեղը որքան համբերող է, բայց զայրանալու դեպքում, թե ինչպես չի կարելի կանգնել նրա առաջ ինչպես առյուծի, թող հարցնեն իրենց ցեղակից հայերին, իմանան ու զգաստանան»։

Նիհալ Ատսըզի նման հայտարարությունը տեղի տվեց քննադատության նույնիսկ թուրքական բուրժուական մամուլում։ Սակայն թուրքական մի քանի թերթերի կողմից հիշյալ մարդատյաց հայտարարության քննադատությունը ամենևին կապ չունի ոչ քրդերին պաշտպանության տակ առնելու և ոչ էլ հայկական դանդաժային կոտորածների քաղաքականությունը դատապարտելու հետ։ Ատսըզը քննադատվեց առավելապես իր «բերանբացություն» համար, ըստ որի Թուրքիայում ազգային փոքրամասնությունների նկատմամբ գործադրված դաժան քաղաքականությունը նախկինում պատահական երևույթ չի եղել և ժառանգվել է Թուրքիայի նոր կառավարողների կողմից։

Հասկանալի է, որ բուրժուազիայի որոշ ներկայացուցիչներ էլ անպատշաճ են համարում նման ծայրահեղ հակամարդկային ելույթները և, ելնելով «Թուրքիայի շահերից», ձգտում են առանց հարաբերությունները սրելու պահպանել իրավիճակը։

Թուրքիայում քրդերի և քրդական հարցի մասին որոշ հետաքրքիր նյութեր կապված են ընդդիմադիր կուսակցությունների՝ միմյանց դեմ քաղաքական կամպանիա մղելու հետ։ Նման դեպքերում մենք ականատես ենք լինում կուսակցությունների փոխադարձ մեղադրանքների միմյանց դեմ մի շարք հարցերում, երբեմն նաև ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականության հարցում։

Դիարբեքիրի նախկին դեպուտատ Ադնան Արալը⁵², օրինակ,

⁵¹ Տե՛ս Չեքին Ալթան, Նշվ. հոդվածը, *Ilhami Soysal*, 15 mi bu?, „Akşam“, 12. VI. 1967; Խամայիլ Բեշիկզի, Նշվ. աշխ., էջ 246, տե՛ս Նաև „Ötügen“, sayı. 28—29.

⁵² Անգամ նոր Թուրքիայի կուսակցության, որը քրդերի քվենեքը ձեռք բերելու համար, ամեն առիթ օգտագործում է հավաստիացնելու, որ ինքը պաշտպանում է արևելյան Անատոլիայի բնակչության սոցիալ-տնտեսական շահերը, բայց գործնականում պաշտպանում է մեծ կալվածատերերի շահերը։

խստիվ քննադատեց Արդարության կուսակցության կառավարութ-
յանը, որ «իր ֆաշիստ գրչակներին մղում է սպառնալ հայերի
նման կոտորել արեւելիներին, իսկ ինքը, նրանց սովի մատնելով
ցտնկանում է մաս-մաս սպանել»։ Ապա նա հայտնում է այն միտ-
քը, որ «մարդկությունը արյան գնով բոլոր բռնակալներին ընդունել
է տվել մարդու իրավունքները և մեր դարաշրջանում ոչ ոք ոչ ոքի,
նույնիսկ հայերին, (ընդգծումը մերն է—Հ. Գ.) չի կարող խեղդել»։

Ադնան Արալն ինքն էլ ըստ երևույթին զգալով, որ այնքան էլ
հիմնավորված չէ իր այդ լավատեսությունը, կոչ է անում Արդարու-
թյան կուսակցության արեւելի դեպուտատներին, կուսակցությու-
նից հրաժարվելու սպառնալիքով կարգի բերել Արդարության կու-
սակցությանը, ժողովրդին կոչ անում՝ «դեպուտատ չընտրել նրանց,
ովքեր չեն պաշտպանում արեւելքի շահերը»⁵³։

Իսկ «առաջագիմական» ժողնալիստ Իլհամի Սոյսալը խստիվ
դատապարտեց Նիհալ Աստըղի ելույթը որպես ֆաշիզմ, որպես
նախկինում Միջին Ասիայից մարդ վերաբնակեցնելու մասին ա-
ռաջարկություն կատարողների (այսինքն՝ պանթուրքիստների—Հ.
Գ.) մի նոր խեղացնող քայլ։ Սակայն հենց ինքը այդ բանավեճի
ընթացքում արտահայտեց այնպիսի մտքեր, զորս յուրացրել էր
այդ ֆաշիստներից։ Նյութից չշեղվելու համար բավարարվենք
նրա պանթուրքիստական բնույթի հետեյալ մտքերով. «Եվ ազգա-
յին ոճիր է, մանավանդ ներկայումս, երբ աշխարհի իրադրությունը
բավականին բարդ է, ասել՝ սա քուրդ է, սա լազ է, այս մեկը չեր-
քեզ, այն մեկը հրեա, մյուսը հայ, հույն, բոշնակ, ալբանացի, բո-
մակ, արխազ, վրացի, արաբ, գնչու և մաս-մաս անել Թուրքիայի
հանրապետության 32 միլիոնանոց զանգվածին, ուր հանդիսա-
նում է երկրագնդում միակ քուրճական հասարակությունը, ուրիշ
հաջողվել է անկախ մնալ» (ընդգծումը մերն է—Հ. Գ.)։

Որ թուրքիայի բնակչությունը բաղկացած է առանձին ազգու-
թյուններից և էթնիկական խմբերից՝ դա օբյեկտիվ իրականու-
թյուն է և ուրանալ յուրաքանչյուրի էթնիկական ինքնուրույնությունը
նույնքան մեղադրելի է, որքան ռասիզմը։

Իզուր չէ, որ ծայրահեղ աջ նացիոնալիստները, հակառակ ի-
րենց ռասիստական պոռթկումներին ազգային փոքրամասնու-
թյունների նկատմամբ, հիմնականում պաշտպանում են այն թեզը,
ըստ որի Թուրքիայում միայն թուրքեր կան։

⁵³ Adnan Aral, Dogu ve AP iktidarı, «Akşam», 27. VIII. 1967.

⁵⁴ Իլհամի Սոյսալ, նշվ. հոդվածը։

Այդ բացահայտ կերպով երևում է Նեժդեթ Սանջարի մեկ քննադատությունից, որը ուղղված է եղել Արդարության կուսակցության սենատորներից մեկին, որը հանդես գալով աջ նացիոնալիստների ռասիստական պոռթկումների դեմ, հայտնել է, որ «ներանք թրքությունը իրենց մոնոպոլիան են համարում», որ «ներանց կարծիքով արևելքում բնակվողները քուրդ, զազա են, հյուսիսիները լազ, վրացի, հարավիները՝ արաբ, արևմուտքիները՝ չերքեզ, ալբանացի, Միջին Անատոլիայում բնակվողները յուրյուկ, թաթար»։ Նեժդեթ Սանջարը աջ նացիոնալիստների անունից միտժելով այդ մեղադրանքը, հայտնում է, որ «այդպիսի թուրքիստ (աջ նացիոնալիստ—Հ. Գ.) չկա և չի եղել։ Որովհետև այդպիսի պնդում կատարել նշանակում է ընդունել, որ Թուրքիան լեցուն է ոչ թուրքերով»⁵⁵։

Իզուր չէ, որ բոլոր նրանք, ովքեր ցանկանում են քրդերին պահել ազգային իրավունքներից զրկված վիճակում, յուրացնում են այդ թեզը, և հանդիմանում իրենց նացիոնալիստ գրեղբայրներին, որ չկարողանալով զսպել իրենց պոռթկումը, այդ «հարազատ թուրքերին», կամ «արևելքի բնակիչներին» հիշեցնում են, որ իրենք քրդեր են և այդպիսով խախտում ազգային միասնության սկզբունքը⁵⁶։

Անշուշտ, ճիշտ չէր լինի պնդել, թե թուրքական կառավարող ռեակցիոն շրջանների և նրանց գաղափարախոսների սուր ճոճելու մոլի շովինիստական քաղաքականությունը անվերապահ պաշտպանություն է գտնում թուրքական ողջ մտավորականության կողմից։ Նույն թուրքական մամուլում, երբեմն «ողջախոհ» կոչել են արվում քրդերի նկատմամբ կիրառվող քաղաքականության առնչություններ։ Անհետաքրքիր չի լինի հիշատակել մի քանի օրինակներ։ Թուրք սոցիոլոգ Իսմայիլ Բեշիկչին կոչ է անում «վերջ տալ Արևելյան Անատոլիայում քրդերեն խոսող քաղաքացիների նկատմամբ գործադրվող ճնշման»⁵⁷։ Ստամբուլում գտնվող «Արևելյան անատոլիացիների ուսանողների և փոխօգնության» միությունները հրապարակեցին մի հայտարարություն, որով մեղադրանք է հարուցվում իշխանությունների դեմ, որոնք պարբերաբար ոտնա-

⁵⁵ Նեժդեթ Սանջար, հատ. նշվ. հոդվածը։

⁵⁶ Արդուլհադի Թոփուլ, նշվ. հոդվածաշարը, „Yeni Istanbul“, 6. III. 1967; Ա. Հալլուկ Յուլմազ, նշվ. հոդվածաշարը, „Forum“, 1. XI. 1967, s. 15.

⁵⁷ ՏԵՄ Իսմայիլ Բեշիկչի, նշվ. աշխատությունը, էջ 254։

հարում են արևելյան վիլայեթների ժողովուրդների լեզվի և մշակույթի իրավունքները», իսկ արևելյան վիլայեթների դեպուտատները «ասիմիլացիայի և գենոցիդի քաղաքականության հանդեպ հանդես են գալիս լուրջ որպես ականատեսներ»⁵⁸։ Թուրք ազգայնականներից ոմանք հանդես են գալիս քրդերեն լեզվի և մշակույթի հարցերում որոշ դիջում կատարելու օգտին, որը «օգտակար կլինի Թուրքիային»։ Նրանք մասնավորապես դեմ չեն քրդերեն ռադիոհաղորդումներ կազմակերպելուն, որպեսզի «Թուրքիայի քրդերին ղերծ պահեն օտարերկրյա քրդերեն ռադիոհաղորդումների ունկընդրումից»⁵⁹։ Այս տեղաշարժերը, իհարկե, որքան էլ աննշան լինեն, դրական երևույթ են քրդերի և քրդական հարցը հախուռն կերպով մերժելու դեռևս հարատևող քաղաքականության պայմաններում։

Ժամանակակից Թուրքիայում քրդերի ազգային իրավունքների ոտնահարման քաղաքականությունը կղզիացած երևույթ է։ Այն հանդիսանում է երկրում տիրող հակահեմոկրատական իրադրության արտահայտություններից մեկը։ Ուստի քրդերի դեմ կիրառվող հալածանքի և հետապնդումների քաղաքականությունը վերջ կարող է գտնել այն դեպքում, երբ երկրի քաղաքական կյանքում ճանաչում գտնեն իսկական ժողովրդական դեմոկրատիան և ազատությունը։

А. А. ГАЛСТЯН

ОТРАЖЕНИЕ КУРДСКОГО ВОПРОСА В СОВРЕМЕННОЙ ТУРЕЦКОЙ ПЕЧАТИ

Резюме

В статье, на основе материалов современной турецкой печати, вскрывается антидемократическая политика правящих кругов и националистической интеллигенции Турции в отношении курдского вопроса. В частности, показывается, что, считая курдов горными «турками», эти круги стремятся лишить их элементарных национальных прав.

⁵⁸ Նույն տեղում, էջ 254, տե՛ս նաև «Akşam», 11. 3. 1969; «Ant», 18. 3. 1969.

⁵⁹ *İlhan Selçuk*, Tehlike nerededir? «Cumhuriyet», 26. IV. 1966; *İlhan Selçuk*; Radyo meselesi, «Cumhuriyet», 15. IV. 1967.

Этот антидемократический подход толкает турецкую националистическую интеллигенцию на то, чтобы искусственно занижать численность курдов в Турции, в превратной форме представлять курдский язык как «несамостоятельный язык», «искаженный турецкий язык», «смесь языков», а также извращать историю курдского народа.

В статье показывается, что эта антидемократическая политика постепенно приобретает весьма реакционный характер. Турецкие националисты, особенно представители их правого крыла, пытаются опорочить курдов Турции и даже не останавливаются перед угрозами их уничтожения.